ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԲԱՆ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆԴԱՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի և Մարինե Ֆարմանյանի,

հաշվի առնելով ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքով (այսուհետ՝ Օրենք) կատարված փոփոխությունները,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Օրենքի ուժով առաջացել է Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների թեկնածուների ներգրավման կարգը հաստատելու անհրաժեշտություն,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 5-րդ մասի, Պալատի կանոնադրության 16.5 կետի 47-րդ ենթակետի պահանջներով,

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- ***Հաստատել Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների թեկնածուների ներգրավման կարգը՝ համաձայն հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

03 փետրվարի 2023թ.
թիվ 4/8-Լ
ք. Երևան